

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԲԱՐԴՈՅԹԸ ՓԻԹԸՐ ՍՈՒՐԵԱՆԻ ՄԻՐԻ ՎԷՊՈՒՄ

ՔՆԱՐԻԿ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ
k.abrahamian@spyurk-center.am

Սահմանման տեսակետից բարդ ու հակասական պատկեր է պարզում օտարագիր գրականությունը. նրա յանձնառություններն ու յատկանիշերը մեկից անելին են: Ամենից առաջ, այն օգնում է օտար ընթերցողին հասու լինել հայութեան ճակատագրի վայրիվերումների գրական-գեղարուեստական արտացոլումներին: Գրողներն իրենց հերթին օտար լեզուի միջոցով հնարաւորութիւն են ստանում իրենց ինքնութեան մասին բարձրաձայնել՝ միաժամանակ տեղ նուաճելով օտար գրականությունների ծիրից ներս: Այդպէս, անգլիական, ամերիկեան, ֆրանսիական եւ այլ գրականություններում իրենց տեղը հաստատել են Ուիլիըմ Սարոյեանը, Մայքըլ Արլէն Կրտսերը, Անրի Վերնէտյը, Փիլըր Բալթեանը, Յակոբ Խաչիկեանը, Անտոնիա Արսլանը, Քերըլ Էդգարեանը եւ այլք, նրանք, ովքեր կազմում են օտարագիր գրականութեան «հայամետ» թեր: Այս դէպքում գերիշխողը 1915ի աղէտի նկարագրությունն է՝ յաճախ լուսանկարչական ճշգրտութեան հասնող, բնաշխարհից փրթած մարդկանց ու յաջորդող սերունդների ճակատագիրը արդէն սփիւռթեան շրջանում, ուր առաջնային գծի վրայ է գալիս յուշապատումը:

Կայ նաեւ երկրորդ ճակատը: Սա գրողների այն խումբն է, որ օտար գրական ածուներ մուտք է գործում սրուած կերպով հակադրուելով հայկականութեանն ու հայ ինքնութեան բարդոյթին: Նշենք նրանցից Մայքլ Արլէն Ասագին, Անրի Թրուայային, ֆրանսիական գրականութեան մէջ Արմէն Լիբէն անունն ընտրած Շահան Շահնուրին, որոշ վերապահումով Վահէ Քաչային: Այս հեղինակներն իրենց յաջողութեան նախապայմանը տեսնում էին համամարդկային, ընդհանրական նիւթի մատուցման մէջ: Եւ գրականութեան պատմությունը կարծես նրանց կողմից է: Երկու խմբերի պարզ համեմատություն արդէն այս է վկայում. հայկականութեան դրօշ պարզած հեղինակներից թերեւս միայն «մեծ աչքերով հսկային» Ուիլիըմ Սարոյեանին է յաջողուել յաղթահարել «օտարութեան» պատնէշն ու տեղ նուաճել, իր պարագային, ամերիկեան գրականութեան համապատկերում:

Ամերիկահայ օտարագիր գրող Փիլըր Սուրեանը՝ այս առումով կարծես գտել է լուսագոյն լուծումը. նրա գրականութիւնն առանձնանում է այս երկու թերերի հետաքրքիր «հաշտեցումով»՝ օտար միջավայրի ու հերոսների ընտրութեամբ՝ ինքնութեան բարդոյթի քննութիւն: Դրա

լուսագոյն օրինակը նա տալիս *Միրի* վեպով (1957), որ հայ ընթերցողի սեղանին է դրուել միայն վերջերս՝ 2013ին (թարգմանիչ՝ Արամ Արսենեան, խմբագիրներ՝ Արամ Արքուն, Լևոն Անանեան): Մինչ այդ հայերենով լոյս են տեսել «Ընթրիք Օտարների Հետ» պատմուածքների եւ խոհագրութիւնների ժողովածուն (2010, Դէվիդ Քալոնի առաջաբանով) եւ «Դարպաս» վեպը (2011):

Անտեսելու չէ մի հանգամանք. հեղինակի ստեղծագործութիւնների հայերէն թարգմանութիւնները լոյս են տեսել ետընթաց յաջորդականութեամբ. ինչը վկայում է, որ չնայած հինգուկէս տասնամեակ է ընկած *Միրի* անգլերէն բնագրի եւ *հայերէն* թարգմանութեան հրատարակութիւնների միջեւ, սակայն նիւթը, կերպարաստեղծման իւրայատկութիւնները, հերոսների վարքագիծը մնում են արդիական ու հետաքրքրական:

Միրին իրականում հեղինակի չորրորդ վիպական ստեղծագործութիւնն է: Մինչ այդ գրուած երեքը, հեղինակի անբաւարարութեան պատճառով, լոյս չեն տեսել:

Իրադարձութիւնների ծաւալումները, հերոսների ներաշխարհը աստիճանաբար մեզ համար բացում են սիրային եռանկիւնու միջոցով, որի խաղարկումը նորութիւն չէ ո՛չ օտարագիր, ո՛չ հայագիր գրականութեան մէջ: Դեռեւս 1920ականների օրինակները մեզ տալիս են անգլիագիր Մ. Առլէնը՝ *Գանաչ Գլխարկ* (Լոնդոն, 1924) եւ հայագիր Շահան Շահնուրը՝ *Նահանջը Առանց Երգի* (Փարիզ, 1929) վեպերով:

*Միրի*ի պարագային ուշադրութեան է արժանի այն հանգամանքը, որ երեք հերոսներից իւրաքանչիւրն ինքն իր մասին քիչ է պատմում ու խօսում, նրանց նախասիրութիւններն ու հոգեաշխարհը բացայայտում են միւս երկուսի երկխօսութիւնների միջոցով: Սուրեանական եռանկիւնու առանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ հերոսների՝ Միրիի, Ջոշի եւ Լեքսիի անուններով վերնագրուած գլուխներում միեւնոյն իրադարձութիւնները բացելու յանձնառութիւնը հերոսներն իրենք են իրենց վրայ վերցնում, ինչը Սուրէն Դանիէլեանի դիպուկ գնահատութեամբ «*Մի կողմից... զօրացնում է գործողութեան վրայ հեղինակի նետած լուսարձակը, միւս կողմից թուլացնում հեղինակի «ճնշումը» ընթերցողի վրայ առ նուազն երեք անգամ*»:

Վեպի առանցքում ամերիկեան միջավայրում յայտնուած յոյների կեանքն է: Հերոսուհին՝ Միրին, պատերազմում կորցրել է ամբողջ ընտանիքին ու հօրեղբօր գթասրտութեան շնորհիւ այժմ սովորում է Բոստոնի քոլէճներից մէկում: Սակայն նոր աշխարհում հեշտ չեն տրոււմ գոյատեւման բանաձևերը. օտարների մէջ նրան ուղեկցողը գաղթականի բարդոյթն է, որը առանձնութեան սուր զգացողութեան պատճառ է դառնում եւ նրա մէջ խուճապ յարուցում մարդկանց հանդէպ: «*Քթիւ տակ*

մոռում էի հայրենիքից բերած երգերից հատուածներ էի ղնդնում եւ երբ մարդ էր մօտենում սակում էի Ամաչում էի եւ չնայած ինձ հիմա ծիծաղելի է թուում ահաւոր վախենում էի մարդկանցից: Հենց մօտենում էին խուճապի էի մատնում չիմանալով թէ ի՛նչ էի անելու եթէ յանկարծ խօսէին հետս»³, - խոստովանում է Միրին:

Իր հայրենիքում պատերազմի առթած տազնապը եւ մահուան մօտիկութիւնը հերոսուիտուս հանգիստ չեն տալիս նաեւ ապահով ամերիկեան միջավայրում: Նա յաճախ է իրեն բռնում այն մխիթարիչ մտքի վրայ, որ «դեռ ողջ է, դեռ ապրում է, եւ դրանով իսկ պարտաւոր է իրեն բախտաւոր համարել»⁴:

Նոյն հոգեբանական բարդոյթն է ապրում նաեւ Միրիի զարմիկը՝ Լեքսին, որը այդ բարդոյթը կրում է իր մէջ ոչ թէ որպէս ապրուած իրողութիւն, այլ ժառանգորդական կապի դրսեւորում: Եւ այդ ազգայինի «բեռից» նա փորձում է ազատուել՝ հակադրուելով հօրը, տնից փախուստի նախընտրութեամբ: Իր ինքնութեան ու հայրենիքի պատմութեան նկատմամբ հետաքրքրութիւնը երիտասարդն ամէն անգամ ստիպուած է կոծկել օտար աչքերից. «Եւ ամէն անգամ, երբ մօտեցող ոտնաձայն էի լսում, գիրքն անմիջապէս ետ էի ղնում գրադարակի վրայ, իբր պոռնոգրաֆիա էր կամ նման մի բան, եւ ձեւացնում էի, թէ հենց էնպէս անցնում էի դրանց կողքով»⁵:

Պատկերը մեզ անմիջապէս տանում է Շահնուրի *Նահանջը Առանց Երգի* վէպի յայտնի դրուագին՝ օտար կնոջ եւ Մայր Հայաստանի խորհրդին առնչուող: Ֆրանսիական միջավայրում յայտնուած հայ հերոսների համար Հայաստանը մերկ կնոջ լուսանկար է, որը գրաւիչ է, հրապուրիչ, եւ նաեւ՝ կործանարար⁶:

Սուրեանի հերոսի՝ Լեքսիի մէջ, նաեւ զարմուիտ շնորհիւ, աստիճանաբար տեղի են ունենում հոգեբանական տեղաշարժեր, որոնց արդիւնքում նա հակում է կորսուած ինքնութեան փնտոտութիւն եւ ի վերջոյ յայտարարում. «Կ'ուզէի հետդ Յունաստանում լինել»⁷:

Նոր միջավայրում հերոսներն ստիպուած են երկակի կեանքով ապրել. վերանալ ազգային արմատից՝ չեն կարող, սակայն ստիպուած են քայլ պահել ամերիկեան ընկերութեան հետ: Եւ պատահական չէ, որ ինքնահաստատման ճանապարհին Լեքսին փորձում է վազքի առաջնութիւնը խլել, եւ սկզբում կարծես ստացում է. «Սկզբում շարքի մէջ էի վազում, բայց յանկարծ ինձ թափ տուեցի ու տեսայ, որ առանց փորձելու էլ բոլորից առաջ էի ընկնում...»⁸: Մակայն այս յաջողութիւնը ժամանակաւոր է. հերոսն ի վերջոյ տեղի է տալիս, աւելին՝ այդ պարտուողականութիւնը տարածում է նաեւ նրա վարքագծի վրայ, որից եւ ծնում է դեռեւս Շեքսպիրից եկող սեփական անձից անբաւարարութիւնը, որը Սուրեանը բերում է իր անմիջական նախորդի՝

Մարտյանի միջնորդութեամբ եւ ձեակերպումով. «Ինչ-որ բան ինչ որ տեղ սխալ է»⁹:

Միրային հարթութեան վրայ Լեքսիի առարկայական յաղթանակը, այն, որ Միրին ընտրում է նրան, բերում է աւելի խորը բարդոյթի՝ յարաբերութեանը ազգականի հետ:

Ինչ առկում է ամերիկեան միջավայրում հերոսների բարդ ու ոչ-միանշանակ ընկալումներին, Սուրեանը դրանք «ցուցադրում է» ամերիկացի Ջոշի հետ յարաբերութիւնների ճանապարհով: Առաջնային տարբերակիչ յատկանիշն այն է, որ այս խառնարանում ոչ ոք չի հետաքրքրում կողքինի անցեալով, «Մենակ Լեքսիին էր պակասում հանրային կրթանկատութեան ակնյայտ բարեկրթութիւնը»¹⁰, - յայտարարում է հերոսուհին:

Եւ այդ հանրային բարեկրթութիւնն էլ դառնում է մարդկանց նոյնականութեան նախապայմանը, հասարակաց գիծը. «Այստեղ եւ այժմ, գետի եւ ափին լաւ մարդ կամ վատ մարդ չկայ»¹¹: Եւ Ջոշն այդ լաւ մարդկանցից մէկն է: Իսկ լաւ լինել նշանակում է չհետաքրքրուել դիմացինի անցեալով: Եւ թերեւս հենց այդ լաւ մարդկանցից մէկը չլինելու, «ուրիշներով լցուած հսկայ ծովուն մէջ» չխառնուելու ինքնապաշտպանական բնագոյն է կապում Միրիին եւ Լեքսիին: Հերոսուհին ինքն էլ փորձում է մեկնել իր ընտրութեան պատճառը. «Երբ միասին էինք, եւ նա լռում էր, Լեքսիի այբերում էնայիսի արտայայտութիւն էր, որ վստահութիւն էր ներշնչում, թէ հասկանում էր ինձ, եւ երբ ես էնայիսի բաներ էի ասում, որ Ջոշը չէր հասկանում, միշէս մանրամասն չբացատրէի, մտածում էի, որ Լեքսին գգում էր, թէ ես ինչ նկատի ունեի, եւ բոլորովին էլ չէր փորձում իմանալ, որովհետեւ արդէն գիտէր»¹²:

Յոյն հերոսների՝ Միրիի եւ Լեքսիի մէջ այդ անիմանալիին հասու լինելու ցանկութիւնն է ամերիկացի Ջոշի մէջ ծնում հետաքրքրութիւն նրանց հանդէպ: Արդիւնքում երբեմն նա ակտիւորութեան զգացում է ապրում, այն աստիճան, որ յաճախ նրա համար ընկերոջ՝ Լեքսիի ու նրա ընտանիքի պատմութիւնը աւելի հրապուրիչ ու առանձնայատուկ էր թւում, քան սեփական պատմութիւնը. «Մաստիկ յուզում էի նրա անցեալի համար՝ ցանկանալով դրա մի մասը լինել»¹³:

Պատմութեան առումով մի դիտարկում եւս, թէւս վեպում ոչ մի ակնարկ չկայ հայերի ու հայկականի մասին, սակայն ենթախորքում պարզ ու ըմբռնելի է հեղինակի նպատակադրումը: Հայկական ենթաբնագրի առումով մեզ գրաւում է խորհրդանիշների ընտրութիւնը՝ գինին, թէկուզ յունական, ուս ուսի տուած պարը, սասնարանում մաճնի առկայութիւնը, հայրական ապտակը, խաղողի այգին, կենցաղավարութիւնը, զաւակների գտարիւն յոյն չլինելու հեռանկարի

սարսափը, յոյն աղջկայ՝ անպայմանօրէն տգեղ լինելու հանգամանքը¹⁴: Ի դէպ, նոյն թերահաւատութիւնն ունի հայ կնոջ նկարագրի վերաբերեալ նաեւ Շահնուրը: Նրա համար օտար հրապոյրների դիմաց հայ կինը «կը ներկայանար միայն երկու հաստ սրունքով ու քիչ մը բեղով»¹⁵:

Երկրորդական չենք համարում հեղինակային ռճաւորման մէկ այլ իւրայատկութիւն եւս՝ յիշատակում են միայն պատերազմը, մարդկային կորուստները, սակայն որոշակի պատմական դէմքերի ու դէպքերի նկարագրութիւն չկայ: Սա ընդհանրական է դարձնում մօտեցումը առհասարակ նմանօրինակ ճակատագիր ունեցող ժողովուրդների հարցում:

Եթէ ընդհանրացնելու լինենք, կարող ենք արձանագրել, որ Սուրեանն իր առաջին վէպով բերում է ինքնութեան հարցադրումների շարք՝ երբեմն պատասխանները թողնելով ընթերցողին ու յետագայ պատմական զարգացումներին, միաժամանակ բաց պահելով պատուհանները նոր երկխօսութիւնների ու սահմանումների համար:

ՍԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Գրող եւ հրապարակախօս Փիթըր Սուրեանը ծնուել է 1933ին, Բոստոնում: Կրթութիւնն ստացել է Ֆիլիպսի Ակադեմիայում եւ Հարվըրդի Համալսարանում: Բնակուել է Եւրոպայում, ուսանել՝ Վերսայի Հոյսէ Լիսէում եւ Սալամանկայի Համալսարանում: Նիւ Եորք Նահանգի Անանդէլլ քաղաքի Բարդ Քոլէճի անգլերէնի պրոֆեսոր է: Հեղինակ է երեք վէպերի՝ *Միրի* (*Miri*, 1957), *Լաւագոյնը Եւ Վատթարը Ճամանակներից* (*The Best and Worst of Times*, 1961) եւ *Դարպասը* (*The Gate*, 1965), ինչպէս նաեւ պատմուածքների ու փորձագրութիւնների:

² Սուրեան Դանիէլեան, *Միջուկի Տրոհումը. Միխուրանայ Գրականութեան Պատմութիւն, Ներածութիւն, Գիրք Ա.*, Երեւան, «Զանգակ - 97» Հրատ., 2011, էջ 284:

³ Փիթըր Սուրեան, *Միրի/Վէպ*, թարգմ.՝ Արամ Արսէնեան, Երեւան, «էդիթ Պրինտ» Հրատ., 2013, էջ 10:

⁴ Նոյն, էջ 9, 41:

⁵ Նոյն, էջ 231:

⁶ «Բաւական մեծ *agrandissement* (Ֆր. մեծադիր նկար - Բ.Ա.) մըն էր, որ կը ներկայացնէր երիտասարդ աղջիկ մը, ոտքի, դասական ձեքձեքուն կեցումաձքով, թւէրը քիչ մը բաց, ժպիտը դէմքին եւ ամբողջութեամբ մերկ» (Շահան Շահնուր, *Նահանջը Առանց Երգի*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1994, էջ 133):

⁷ Սուրեան, *Միրի*, էջ 65:

⁸ Նոյն, էջ 102:

⁹ Նոյն, էջ 131, 146: Ի դէպ, Մարոյեան-Սուրեան երկխօսութիւնը հաստատում է նաեւ վէպի նոյն հատումում Լեքսիի հօր պատանեկան շրջանում ձի

գողանալու հետ կապուած ակնարկով: Յիշենք Սարոյեանի «Գեղեցիկ Սպիտակ Ձիու Ամառը» պատմուածքը:

¹⁰ Սուրեան, *Միջի*, էջ 67:

¹¹ Նոյն, էջ 70:

¹² Նոյն:

¹³ Նոյն, էջ 181:

¹⁴ Նոյն, էջ 224-225:

¹⁵ Շահնուր, էջ 128:

ADDRESSING THE IDENTITY CONUNDRUM IN PETER SOURIAN'S NOVEL *MIRI*
(SUMMARY)

KNARIG APRAHAMIAN
k.abrahamian@spyurk-center.am

Defining and characterizing foreign literature produced by Armenian authors is a controversial and complicated task, as such literary productions have diverse objectives and characteristics and it is hard to decide whether they constitute a part of Armenian literature.

Aprahamian categorizes such literary productions in two groups: a) those which relate Armenian issues in various forms, b) those which completely bypass Armenian issues.

In this framework the author highlights the literary works of the American-Armenian writer Peter Sourian, whose first novel, *Miri*, printed in 1957, has lately been translated into Armenian. Aprahamian discusses how Sourian reconciled the above-mentioned two tracks and developed an identity discourse by projecting the identity crisis on non-Armenian characters in his Novel, *Miri*.